ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

2004

թվականին

ԵՐԵՎԱՆ
2005

Ձեզ ներկայացված գրքույկում համառոտ անդրադարձ է կատարված
2004 թվականին ՀՀ կառավարության կողմից իրականացված
սոցիալական և տնտեսական քաղաքականությանը, դրա արդյունքներին,
որոնք յուրաքանչյուր տարի ընդարձակ հաշվետվության ձևով
ՀՀ նախարարություններն ու կառավարությանն առընթեր մարմինները
ներկայացնում են Կառավարություն:
Գրքույկի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է նաև
Կառավարության ինտերնետային պաշտոնական էջում (http://www.gov.am),
իսկ նախարարությունների և գերատեսչությունների
ընդարձակ հաշվետվությունները՝ իրենց ինտերնետային էջերում:

ԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2004 թ. սոցիալ-տնտեսական քաղաքականության իրագործումը

Վերջին տարիներին, այդ թվում՝ 2004 թվականին, Հայաստանի կառավարությանը հաջողվել է հասնել տնտեսական և սոցիալական բազմաթիվ հիմնախնդիրների լուծման, շնորհիվ տնտեսական և սոցիալական ցուցանիշների շարունակական բարելավման, ծրագրային քաղաքականության իրագործման, որը մշակված է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածների համար:

Դրա արտահայտությունն է այն փաստը, որ 2004 թվականին ՀՆԱ-ի իրական աճը կազմեց 10.1 տոկոս: Արդյունքում՝ 2000–2004 թվականների տնտեսության իրական աճը միջինում կազմել է տարեկան 10.5 տոկոս, ինչը բավականին բարձր ցուցանիշ է Հայաստանում տնտեսական աճի գրանցման ամբողջ ընթացքում: Տնտեսական աճի արդյունքում 2004 թվականին ՀՆԱ-ի մակարդակը հասել է 1989 թ. տնտեսության մակարդակի 99.6 տոկոսին:

Մեծ չափով բարձրացել է պետական բյուջեի կատարման կարգապահությունը: Հարկային և մաքսային վարչարարության բարելավումը մի կողմից, ծախսերի արդյունավետության բարձրացումը մյուս կողմից հնարավորություն են տվել օրենքով սահմանված ծախսերը կատարել նախատեսված ժամկետներում: Նվազել է նաև Հայաստանի բյուջեի կատարման կախվածությունը փոխառու միջոցներից: Պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերությունը 2004 թվականին, նախնական տվյալներով, կազմել է ՀՆԱ-ի մոտ 2.3 տոկոսը:

Բյուջեի դեֆիցիտի կրճատման և դրա նկատմամբ ՀՆԱ-ի առաջանցիկ աճի շնորհիվ կառավարությանը հաջողվեց նաև կրճատել արտաքին պարտքի չափը, որը 2004 թվականին նվազել է մինչև 32.7 տոկոս: Կառավարությանը հաջողվեց ավարտին հասցնել արտաքին պետական պարտքի կազմում առկա՝ Եվրոմիության, Ռուսաստանի Դաշնության հանդեպ ունեցած ոչ արտոնյալ վարկերի վաղաժամկետ մարման գործընթացը:

Հաջողությամբ շարունակվել է միջազգային ֆինանսական հաստատությունների՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի հետ իրականացվող զարգացման ծրագրերի ընթացքը: Տարվա ընթացքում Համաշխարհային բանկը հաստատեց Հայաստանին աջակցության հաջորդ քառամյա ռազմավարությունը, որով նախատեսվում է առաջիկա չորս տարիների ընթացքում բանկի միջոցների հաշվին իրականացվող վարկային պորտֆելը լրացնել մինչև 220 մլն ԱՄՆ դոլար արժեքով նոր ներդրումային ծրագրերով: Հաջողությամբ ավարտվեց Արժույթի միջազգային հիմնադրամի հետ իրականացվող ծրագիրը, և բավարար նախադրյալներ ստեղծվեցին նոր ծրագրի իրականացման համար:

Շարունակվել են սոցիալական ուղղվածության ոլորտներում բարեփոխումները. Կրթության և առողջապահության ոլորտում իրականացված բարեփոխումների շնորհիվ պետության իրականացրած ծրագրերը դարձել են ավելի հասցեական ու նպատակային:

Սոցիալական ապահովության և ապահովագրության ոլորտներում կառավարության գործունեությունն ուղղված է եղել բյուջետային սուղ միջոցների արդյունավետության բարձրացմանն ու առկա ռեսուրսներով պետության աջակցությունն ակնկալող քաղաքացիների համար առավել կարևոր խնդիրների լուծմանը:

Ըստ ոլորտների կառավարության իրականացրած քաղաքականությունները և դրանց արդյունքները առավել մանրամասն ներկայացվում են ստորև:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

2004 թ. սոցիալ-տնտեսական քաղաքականության իրագործումը

2004 թվականին շարունակվել է տնտեսական ոլորտին վերաբերող քաղաքականության հետևողական իրականացումը: Այն ապահովվել է համապատասխան օրենսդրական դաշտի զարգացմամբ, ինչպես նաև նշված օրենսդրության կիրառման հարցում հետևողականության բարձրացմամբ: Տարվա տնտեսական արդյունքները հաստատում են կառավարության կողմից նախորդ տարիների գործունեության արդյունքների կապակցությամբ նախկինում տրված այն գնահատականը, որ հաղթահարվել է անցումային տնտեսությանը բնորոշ դժվարությունների զգալի մասը:

Տնտեսության մեջ ազատական հարաբերությունների արմատավորման նպատակով մշակված մի քանի տասնյակ հիմնարար օրենքների առկայությունը հնարավորություն է տալիս կենտրոնանալ տնտեսական անվտանգության ապահովման, համաշխարհային տնտեսության մեջ ակտիվ ինտեգրման, գիտատեխնիկական և ինովացիոն զարգացման խնդիրներին:

2003 թվականից Հայաստանի անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) էլ ավելի խորացրեց միջազգային տնտեսական համակարգին ինտեգրման գործընթացը, որի արդյունքում օրենսդրական դաշտը համապատասխանեցվեց միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և չափանիշներին: Վերջինս իր հերթին լուրջ խթան հանդիսացավ օտարերկրյա ներդրումների ներգրավման համար՝ էապես նպաստելով երկրում տնտեսական ակտիվության բարձրացմանը:

Ինքնին խոսուն է այն փաստը, որ տնտեսական ազատականության համապատասխան գնահատմամբ Հայաստանը 155 երկրների մեջ զբաղեցնում է արդեն 42-րդ տեղը և որակվում է որպես «հիմնականում ազատ»:

Սկսվել է և շարունակական բնույթ է կրելու կիրառական նշանակության մշակումներ կատարող գիտական կազմակերպությունների մասնավորեցման գործընթացը, որը փաստորեն, նպաստում է գիտատեխնիկական ոլորտում մասնավոր հատվածի ձևավորմանը և գործունեության արդյունավետության բարձրացմանը:

2002թ. ՀՀ կառավարությունը հռչակել է Հայաստանում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները: 2004թ. մշակվել է «ՀՀ-ում ինովացիոն գործունեության Հայեցակարգ»-ը, որտեղ ամրագրված են ՀՀ կառավարության կողմից իրականացվող ինովացիոն քաղաքականության սկզբունքներն ու մոտեցումները: Վերջինիս և դրա հիման վրա մշակվող «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումը կնպաստի առաջիկա տարիներին գիտելիքի վրա հիմնված տնտեսության ձևավորմանը:

Նշվածը մեկ անգամ ևս հաստատում է, որ մեկ տասնամյակից ավելի շարունակվող տնտեսական բարեփոխումների արդյունքում ստեղծված են բոլոր այն հիմքերը, որոնք անհրաժեշտ են Հայաստանի բնակչության կենսապայմանների բարելավման հարցում կայուն առաջընթաց ունենալու համար:



Այլ կերպ ասած, անցման այս վերջին փուլում համակարգային վերափոխումներին ուղղված խնդիրներն աստիճանաբար փոխարինվում են զարգացման ապահովման խնդիրներով:

Դրա ապացույցն է այն փաստը, որ 2004 թվականին տնտեսական զարգացումները շարունակվում են բնութագրվել բարձր ցուցանիշներով: Այն լրացնում է նախորդ տարիների դրական զարգացումների շարքը: Արդյունքում՝ 2000-2004 թվականներին տնտեսական աճը կրկնակի գերազանցել է



դրան նախորդող հինգ տարիների նույն ցուցանիշը: 2000-2004 թվականներին միջին տարեկան տնտեսական աճը կազմել է 10.5 տոկոս:

2004 թվականին ՀՆԱ-ն կազմել է 1989 թվականի մակարդակի 99.6 տոկոսը, և արդեն 2005 թվականին այն կգերազանցի 1989 թվականի մակարդակը[1]: 2004 թվականին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմեց գրեթե 1100 ԱՄՆ դոլար:

Վերջին տարիներին մակրոտնտեսական քաղաքականությունն ուղղված է եղել տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովմանը, գնային փոփոխականների կայունացմանը, մասնավոր հատվածի զարգացմանը, տնտեսվարող սուբյեկտների համար հավասար պայմաններ ապահովող մրցակցային և բարենպաստ ներդրումային միջավայրի ապահովմանը:

Ըստ էության կայացել է պետություն-մասնավոր հատված երկխոսությունը, որը գործարար և ներդրումային միջավայրի բարելավման կարևորագույն գրավականն է:

2000 թվականին ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծված Գործարարության Աջակցության Խորհուրդն իր կազմում միավորել է ինչպես կառավարության ներկայացուցիչներին, այնպես էլ հանրապետության գործարարներին, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության ներկայացուցիչներ (այժմ ԳԱԽ -ում ներկայացված է 44 գործարար): 2000-2004թթ. ընթացքում Խորհրդի կողմից քննության են առնվել հանրապետության գործարար միջավայրի բարելավմանն ուղղված բազմաթիվ խնդիրներ և լուծվել վիճահարույց հարցեր մասնավորապես հարկային և մաքսային վարչարարության ոլորտում:

[1] *2005 թվականին կանխատեսվում է ՀՆԱ-ի 8.0 տոկոս աճ:*



Նախկին ԽՍՀՄ երկրների համեմատությամբ 2004 թվականի արդյունքով Հայաստանի ցուցանիշը ՀՆԱ-ի մասով բավականին տպավորիչ է[2]: Առաջիկա տարիներին հիմնական խնդիր պետք է դառնա եկամուտների առավել բաշխման հավասարության արմատավորումը:

Իրականացվող տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականությունները իրենց ուղղակի ազդեցությունն են ունեցել բնակչության դրամական եկամուտների աճի վրա: Միջին աշխատավարձերը 2004 թվականին կազմել են մոտ 42 հազար դրամ: Տարվա ընթացքում մասնավոր հատվածի համեմատությամբ (2003 թվականի համեմատությամբ աճը կազմել է 20.5 տոկոս) բյուջետային հատվածի աշխատողների աշխատավարձերը ունեցել են առաջանցիկ աճ՝ 2003 թվականի համեմատությամբ աճելով 20.5 տոկոսով: Արդյունքում՝ 2000-2004 թվականներին բնակչության դրամական եկամուտների տարեկան աճը միջին հաշվով կազմել է 13.6 տոկոս, ընդ որում 2004 թվականին՝ 16.8 տոկոս:

[2] *Մերձբալթյան հանրապետությունների ընդհանուր աճի պաշտոնական տվյալները 2004 թվականի համար դեռևս բացակայում են, սակայն մեր գնահատումներով այն չի գերազանցի 7.3 տոկոսը: Արդյունքում այդ երեք պետությունների ՀՆԱ-ն կհասնի 1989 թվականի մակարդակի մոտ 90 տոկոսին:*

Ներդրումներ

Տնտեսական զարգացման հուսալի երաշխիք է ներդրումների շարունակվող աճը: Օտարերկրյա ներդրումները Հայաստանի տնտեսության զարգացման բարձր տեմպերի պահպանման համար ունեն վճռորոշ նշանակություն: Այդ է պատճառը, որ Հայաստանում օտարերկրյա ներդրումների խրախուսումը եղել է կառավարության ներդրումային քաղաքականության առանցքային կետերից մեկը:

Հայաստանի Հանրապետության կառավարության վարած ներդրումային քաղաքականության արդյունքում օտարերկրյա ներդրողների կողմից 2000-2004թթ. (2004 թվականինը՝ 9-ամսյա կտրվածքով) ընթացքում Հայաստանում իրականացված օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 935.5 մլն ԱՄՆ դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 605,9 մլն ԱՄՆ դոլար: Օտարերկրյա ուղղակի ներդրումների տարեկան միջին աճը 2000-2004թթ կազմել է մոտ 20%:

Վերջինիս նպաստում են նաև պետական ներդրումային ծրագրերը, որոնք ծավալվում են տնտեսության համար այնպիսի կարևորագույն ոլորտներում, ինչպիսիք են՝ տրանսպորտային ենթակառուցվածքները, ոռոգման համակարգը և այլն: 2004 թվականին պետական ներդրումները կազմել են շուրջ 74.7 մլրդ դրամ և ուղղված են եղել հիմնականում ենթակառուցվածքների, այդ թվում՝ տրանսպորտային ենթակառուցվածքների, ոռոգման համակարգի զարգացմանը, ինչպես նաև դպրոցների հիմնանորոգմանը: Շարունակել է կարևոր նշանակություն ունենալ պետական սեփականությամբ ձեռնարկությունների (դրանց նկատմամբ պետական սեփականության օտարման) մասնավորեցման ճանապարհով ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավման քաղաքականությունը:



Զգալիորեն ընդլայնվել է նաև «Ներդրումների փոխադարձ պաշտպանության և խրախուսման համաձայնագրերի» ընդգրկման դաշտը (առ այսօր ստորագրվել են համաձայնագրեր 31 պետությունների կառավարությունների հետ):

Դեռևս Հայաստանի տնտեսության խնայողությունները բավարար չեն ներդրումների ծավալի կտրուկ մեծացման և տնտեսական աճի ներքին կայուն աղբյուրներ ստեղծելու համար: Միևնույն ժամանակ, մակրոտնտեսական կայունությունն ու երկրի ռիսկայնության նվազումն անհրաժեշտ հիմքեր են ստեղծել ներդրումների զգալի աճի համար:

Հատկանշական է, որ ներդրումային գործընթացում մեծացել է ներքին խնայողությունների դերը: Այդ է վկայում մասնավոր և պետական սպառման տեսակարար կշռի նվազումը ՀՆԱ-ում: 2004 թվականի 9 ամիսների կտրվածքով մասնավոր և պետական սպառում /ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 93.7 տոկոս:

2004 թվականին մշակվել է «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունումը կապահովի տեղական և օտարերկրյա ներդրողների գործունեության համար հավասար պայմաններ, կձևավորի կայուն և կանխատեսելի ներդրումային և գործարար միջավայր:

Մասնավորեցում եւ պետական գույքի կառավարում

Սեփականության մասնավոր ձևի արմատավորումը և տնտեսական զարգացումներում վերջինիս դերի բարձրացումը հանդիսացել է վարվող պետական քաղաքականության կարևոր հարցերից մեկը: Տեղական և օտարերկրյա ուղղակի ներդրումների շրջանակների ընդլայնումը և տնտեսության նոր ոլորտներում դրանց մուտքի հնարավորությունների ստեղծումն այն հիմնական ռազմավարությունն է, որով կառավարությունը վերջին տարիներին առաջնորդվել է մասնավորեցման քաղաքականությունների իրականացման ընթացքում:

Մասնավորեցման ճանապարհին ձեռքբերված հաջողություններից հատկանշական ենք համարում այն, որ հետևողականորեն օտարերկրյա և տեղական ներդրումների ներգրավման, տնտեսությունում մասնավոր սեփականության վրա հիմնված ընկերությունների թվի ավելացման շնորհիվ 2004 թվականին շարունակվել է ՀՆԱ-ի կառուցվածքում մասնավոր հատվածի բաժնի մեծացումը, և վերջինս ապահովել է ՀՆԱ-ի ավելի քան 80 տոկոսի արտադրությունը:

2004 թվականի մասնավորեցման գործընթացի արդյունքներով կառավարության վերահսկման գործառույթում են գտնվում ներդրումային պարտավորություններ և սոցիալական երաշխիքներ սահմանող թվով 136 մասնավորեցման և օտարման պայմանագրեր:

2004 թվականին իրականացվել են պետական գույքի մասնավորեցման, կառավարման, լուծարման և սնանկացման գործընթացների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Մասնավորապես, համապատասխան իրավական ակտերով, կանոնակարգվել են լուծարված ընկերությունների պետության բաժնեմաս համարվող պետական կառավարչական հիմնարկներին ամրացված շարժական գույքի մասնավորեցման գործընթացում առաջացող խնդիրների լուծման հետ կապված հարցերը, ինչպես նաև հաշվեկշռային արժեք չունեցող անավարտ շինարարության օբյեկտների արժեքի որոշման ու գնահատման հետ կապված հարցերը: Բարձրացվել է ֆինանսատնտեսական մոնիտորինգի գործընթացի և պետական գույքի կառավարման արդյունավետությունը:

Տոկոսադրույքներ

Երկարաժամկետ ներդրումների աճի հիմնական գրավականը տնտեսության ռիսկերի նվազումն է, ինչի հիմնական արտացոլումը տոկոսադրույքների փոփոխությունն է: Պետական պարտատոմսերի տարեկան տոկոսադրույքները նվազեցին նաև 2004 թվականին և կազմեցին 9 տոկոս:

Այս գործոնը նպաստել է 2004 թվականի ընթացքում վարկային տոկոսադրույքների նվազման վրա: Առևտրային բանկերի վարկերի տոկոսադրույքը 2004 թվականի ընթացքում նվազել է մինչև 18.7 տոկոս՝ ուղղակի դրական ազդեցություն գործելով ներդրումների իրականացման միջավայրի բարելավման վրա:

Արտահանում

Հայաստանի տնտեսական աճի կարևոր գրավականներից է միջազգային տնտեսությանն ինտեգրման խորացումը: Մասնավորապես ԱՀԿ անդամակցությունն ապահովեց140-ից ավելի երկրներում հայաստանյան ապրանքների և ծառայությունների նկատմամբ ոչ խտրական մոտեցման կիրառումը: Այս երևույթը, հատկապես Հայաստանից արտահանվող ապրանքների ծավալների ավելացման միջոցով, մեծ նշանակություն է ունեցել վերջին տարի-



ներին տնտեսական աճի և, այդպիսով, բնակչության դրամական եկամուտների ավելացման հարցում:

Հատկապես նկատելի են զուտ արտահանման մեծացման դրական միտումները, որը մի կողմից պայմանավորված է ներմուծման փոխարինմամբ և մյուս կողմից՝ արտահանման ընդլայնմամբ:

Չնայած 2004 թվականին ապրանքների արտահանումը նախորդ տարվա համեմատ աճել է 4.3 տոկոսով, սակայն ապրանքների արտահանումն առանց թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի աճել է մոտ 24 տոկոսով:

Փոքր եւ միջին ձեռնարկատիրություն

Վերջին տարիներին փոքր և միջին ձեռնարկատիրությանը (ՓՄՁ) աջակցությունը հանրապետությունում ստացավ համակարգված բնույթ և, միաժամանակ ամրագրվելով Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում, իր ուրույն տեղն ստացավ իրականացվող պետական սոցիալ-տնտեսական քաղաքականության շրջանակում: Դեռևս այս ոլորտում պետական ներդրումների ծավալը հեռու է բավարար լինելուց, սակայն պետական աջակցության ցանկալի ծավալներին հասնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ձևավորել և կայացնել այն ինստիտուտներն ու մեխանիզմները, որոնցով ցուցաբերվող աջակցությունն արդյունավետ ձևով կարող է նպաստել յուրաքանչյուր ՓՄՁ սուբյեկտի շահի ստեղծմանը:

Տարեցտարի իրականություն է դառնում ՓՄՁ պետական աջակցության ծավալների ավելացումը, որն ապահովվում է ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերով: Վերոնշյալի շրջանակներում 2002-2004 թվականներին ՓՄՁ սուբյեկտներին գործարար խորհրդատվության ապահովման, նորարարությունների և առաջավոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ընդլայնման, ֆինանսական ռեսուրսների ներգրավման աջակցության, որակի կառավարման համակարգերի ներդրման, տարբեր պետական և ոչ պետական կառույցների կողմից ցուցաբերվող օժանդակության հասանելիության ապահովման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր, և արդեն իսկ 2004 թվականի ընթացքում Երևանում ու հանրապետության այլ մարզերում գործող ավելի քան 4500 ՓՄՁ սուբյեկտ հանդիսացել է նշված օժանդակության հասցեատեր:

ՓՄՁ պետական աջակցության 2004թ. ծրագրի իրականացման համար պետական բյուջեից փաստացի հատկացվել է 234 մլն դրամ: Իսկ ՓՄՁ պետական աջակցության 2005թ. ծրագրի իրականացման համար պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 300 մլն դրամ:

Կարևորելով մարզերում ՓՄՁ պետական աջակցության հասանելիությունն ու մատչելիությունը՝ 2003-2004 թվականներին կառավարությունը մի շարք որոշումներ կայացրեց ՓՄՁ աջակցության մարզային կենտրոնների ստեղծման և ընդլայնման ուղղություններով:

Պետական կառույցները մոտեցվեցին տեղերում շահառու կազմակերպություններին, ինչը նույնպես կոչված է բարձրացնելու ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվող օժանդակության հասանելիությունն ու արդյունավետությունը:

ՓՄՁ սուբյեկտների պետական աջակցության կառավարության որդեգրած քաղաքականությունն արտահայտվում է նաև վերջիններիս նկատմամբ կիրառվող բարենպաստ հարկային համակարգով:

Շնորհիվ ՓՄՁ սուբյեկտների գործունեության համար բարենպաստ օրենսդրական դաշտի և համապատասխան ենթակառուցվածքների ձևավորման, դրանց զարգացման համալիր միջոցառումների շարունակականության ապահովման, տնտեսական համընդհանուր զարգացումներին զուգընթաց զգալի որակական և քանակական վերելք է ապրել նաև ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը: 2004 թվականի ՀՆԱ- ում այն կազմել է 39 տոկոս՝ գրեթե կրկնակի գերազանցելով 2000 թվականի մակարդակը:

Վերջին 3 տարիների ընթացքում ստեղծվել են շուրջ 20 հազար ՓՄՁ սուբյեկտներ, իսկ միայն 2004 թվականի ընթացքում, ըստ նախնական գնահատականների, ստեղծվել են շուրջ 8500 նոր սուբյեկտներ՝ ապահովելով ավելի քան 21 հազար նոր աշխատատեղ:

Ընդհանուր առմամբ, ՓՄՁ պետական աջակցության 2004 թվականի ծրագրային միջոցառումների ավելի քան 70 տոկոսն ուղղվել է մարզերի տնտեսական և գործարար ակտիվության բարձրացմանը:

ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության շարունակականության ապահովման և ընդլայնման ուղղությամբ իրականացվող համալիր ծրագրերն ու միջոցառումները անհրաժեշտ նախապայման են հանդիսանում երկրի տնտեսական աճի ապահովման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության սոցիալական վիճակի բարելավման և ընդհանուր առմամբ երկրում աղքատության հաղթահարման գործում:

Զբոսաշրջություն

Վերջին տարիներին Հայաստանում զբոսաշրջությունն իր զարգացման տեմպերով և արդյունքներով հանրապետության առավել արագ և դինամիկ զարգացող ճյուղերից է, ինչը փաստվում է նաև վիճակագրական տվյալներով: Ներգնա այցելությունների աճը 2001թ. սկսած պահպանվում է տարեկան 25-30 տոկոսի սահմաններում:

Հավաքագրված տվյալները բացահայտում են նաև այցելությունների աշխարհագրության ընդլայնման փաստը: Հայաստան այցելությունների գերակշիռ մասը բաժին է ընկնում հետևյալ տարածաշրջաններին՝ ԵՄ (30.2 %), ԱՄՆ (23.3%), ԱՊՀ (22 %), Մերձավոր Արևելք (9.2 %):



Ներգնա զբոսաշրջության զարգացմանը զուգահեռ դինամիկ աճ է արձանագրվել ներքին զբոսաշրջությունում՝ 2004թ. 9 ամիսների տվյալներով 2003թ. նույն ժամանակահատվածի դիմաց ապահովելով 12.8 % աճ: ՀՆԱ-ի կառուցվածքում և ծառայությունների արտահանման ծավալներով զբոսաշրջության ոլորտը հանրապետությունում առաջատար ոլորտներից է: 2001-2004թթ. ընթացքում զբոսաշրջությունից ստացած եկամուտները անցել են 250 մլրդ. դրամի սահմանագիծը:

Վերջին տարիներին իրավական հիմքեր են դրվել զբոսաշրջության ինդուստրիայի շահառուների միջև փոխհարաբերությունների ձևավորման, տեղաբաշխման հատվածի որակի չափանիշների կարգավորման և Հայաստանի զբոսաշրջային արդյունքը պատշաճ կերպով ներկայացնելուն ուղղված գործում: Գրանցվել է հյուրանոցային, ռեստորանային, տրանսպորտային, ժամանցային, մշակութային ենթակառուցվածքների քանակական և որակական, ինչպես նաև զբոսաշրջային արդյունքի միջնորդավորված ծառայությունների առաջարկի կտրուկ աճ:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Ընդհանուր առմամբ ՏՏ զարգացման տեմպերը պահպանվել են: 2004 թվականի դրությամբ ՏՏ ոլորտում ակտիվ աշխատում է շուրջ 140 ձեռնարկություն, աշխատատեղերի քանակը աճել է շուրջ 200-ով: ՀՆԱ-ում ոլորտի բաժինն արդեն կազմել է 1,7 % (2001թվականին՝ ՀՆԱ 0, 35 %):

Իրականացված ծրագրերը (ցուցահանդեսներ, մրցույթներ, համաժողովներ) նպատակուղղվել են արտադրության ընդլայնմանը, արտահանման խթանմանը, ՏՏ-ի ինտեգրմանը տնտեսության մյուս ճյուղեր, երիտասարդ մասնագետների մասնագիտական կարողությունների բացահայտմանը, վերապատրաստմանն ու ուսուցմանը, նորարարական աշխատանքների զարգացմանը, ներդրումների ներգրավմանը:

2004 թվականին ընդունվել է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ կառավարության կողմից ներկայացված ՀՀ օրենքը:

Ստանդարտացում, չափագիտություն եւ համապատասխանության հավաստում

2004 թվականին իրականացված աշխատանքները հիմնականում ուղղվել են ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման բնագավառներում օրենսդրական դաշտի հստակեցմանը և դրանց ներդաշնակեցմանը Եվրոմիությունում գործող նմանատիպ օրենքների հետ:

Ընդունվել են ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման ոլորտները կարգավորող «Ստանդարտացման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին» և «Համապատասխանության գնահատման մասին» կառավարության կողմից ներկայացված հիմնադրույ-

թային օրենքները: Հստակ կանոնակարգվել են ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման ոլորտների գործընթացները:

ԱՀԿ-ին անդամագրվելուց հետո, ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով, լայնածավալ աշխատանքներ են ծավալվել Հայաստանի Հանրապետությունում արտադրանքի, ծառայությունների անվտանգության պահանջները սահմանող տեխնիկական կանոնակարգերի մշակման ուղղությամբ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

2004 թ. սոցիալ-տնտեսական քաղաքականությանիրագործումը

2004 թվականին գյուղատնտեսության ոլորտի իրական աճը կազմել է 14.5 տոկոս, շինարարության աճը՝ 13.4 տոկոս, տրանսպորտի և կապի ոլորտում ծառայությունների աճը՝ 17 տոկոս, առևտրի և հանրային սննդի ոլորտում աճը՝ 10.5 տոկոս: ՀՆԱ-ի աճի վրա ազդեցության իմաստով 2004 թվականին մեծ է եղել գյուղատնտեսության և ծառայությունների դերը, որոնց բաժին է ընկել 10.1 տոկոս տնտեսական աճի 7.4 տոկոսային կետը: 2000-2004 թվականներին միջին աճը գյուղատնտեսության ճյուղում կազմել է 6.6 տոկոս, իսկ ծառայությունների ոլորտում՝ 9.8 տոկոս:

2000-2004թթ. ընթացքում շինարարության ոլորտում միջին տարեկան աճը կազմել է 26.6 տոկոս: Շինարարության ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ 2000 թվականի 10.3 տոկոս մակարդակից 2004 թվականին աճել է մինչև 15.3 տոկոսի:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2004 թ. սոցիալ-տնտեսական քաղաքականության իրագործումը

Վերջին տարիների հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է եղել առանց հարկային բեռի բարձրացման հարկային ներուժի առավելագույն օգտագործմանը, նոր ծախսային ապառքների չկուտակմանը և կուտակված ապառքների մարմանը, ինչպես նաև պետական բյուջեի դեֆիցիտի աստիճանական կրճատմանը:

Բյուջետային գործընթացի կանխատեսելիության աստիճանը բարձրացնելու նպատակով հիմքեր ստեղծվեցին միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման և այն յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների շրջանակում ներառելու ուղղությամբ:

Գործող հարկային օրենքների համախմբման, հարկային օրենսդրության կատարելագործման նպատակով 2004 թվականին մշակվեց Հայաստանի Հանրապետության միասնական հարկային օրենսգրքի ընդհանուր մասի նախագիծը:

Իրականացվող մաքսային քաղաքականության շրջանակներում մաքսային գործի կատարելագործման և արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար արդյունավետ տնտեսական գործունեության պայմաններ ապահովելու նպատակով մաքսային օրենսդրությամբ մի շարք կարևորագույն հիմնահարցեր են լուծվել: Հստակեցվել են մաքսային արժեքի որոշման կարգը, ապրանքների ծագման երկրի որոշման կանոնները, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության գործում մաքսային մարմինների գործառույթները կանոնակարգող նորմերը, մաքսային գործը կանոնակարգող բոլոր հիմնական ընթացակարգերն ու հիմնահարցերը:

2004 թվականին պետական բյուջեով նախատեսված 288.7 մլրդ դրամ եկամուտների և գրանտների դիմաց փաստացի ստացվել է 297.9 մլրդ դրամ, ընդ որում՝ 257.0 մլրդ դրամ հարկային եկամուտների դիմաց փաստացի բյուջե է վճարվել 267.0 մլրդ դրամ հարկ: Նախատեսվածից ավելին են եղել նաև ոչ հարկային եկամուտները, որոնք 8.5 մլրդ դրամի փոխարեն կազմել

են 12.0 մլրդ դրամ: Պակաս են ստացվել պաշտոնական տրանսֆերտները՝ ծրագրավորված 14.2 մլրդ դրամի դիմաց ստացվել է 9.7 մլրդ դրամ:

2004 թվականը առանձնահատուկ էր նրանով, որ հարկային եկամուտների աճի կառուցվածքում առաջանցիկ է եղել ուղղակի հարկերի (եկամտահարկի և շահութահարկի) աճի տեմպը: Տարվա ընթացքում հարկային եկամուտների 17 տոկոս աճի պայմաններում եկամտային հարկերի աճը կազմել է ավելի քան 50 տոկոս: Զուգահեռաբար, բարձրացել է նաև հարկային գերավճարներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներին պետության կողմից հարկերի վերադարձի ցուցանիշը (հիմնականում ներառում է արտահանողների ԱԱՀ-ի գումարները): 2004 թվականի ընթացքում այն կազմել է շուրջ 10.5 մլրդ դրամ և 2003 թվականի համեմատ աճել է մոտ 2.8 անգամ:

Չնայած այն հանգամանքին, որ պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշը բացարձակ մեծությամբ գերակատարվում է, հարկային եկամուտների հարաբերությունը ՀՆԱ-ին դեռևս գոհացուցիչ չէ: Վերջին երկու տարիներին 2002 թվականի համեմատ այս ցուցանիշը որոշակի անկում է ունեցել, ինչը հատկապես պայմանավորված է ՀՆԱ-ի՝ ծրագրվածից էապես բարձր տեմպերով: Հաշվի առնելով այդ հանգամանքը, կառավարության կողմից շարունակվում են միջոցներ ձեռնարկվել (դրանք ընդգծված կլինեն նաև 2005 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքում) հարկային և մաքսային վարչարարության բարելավման ուղղությամբ: Նախատեսվում է, որ արդեն 2005-ին կկատարվի ոչ միայն հարկերի ավելացման բացարձակ ցուցանիշը, այլև հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կգերազանցի 2002 թվականի մակարդակը:

Ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման և կարգապահության բարձրացման շնորհիվ հնարավոր դարձավ ոչ միայն չկուտակել բյուջետային նոր ապառքներ, այլ նաև մարել նախորդ տարիներին կուտակված ապառքները: 2004 թվականին ընթացիկ ծախսերը կատարվել են օրենքով սահմանված ժամկետներում և ապառքներ չեն կուտակվել:

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի գերկայություններին համահունչ՝ 2004 թվականին սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերի աճի տեմպը առաջանցիկ է եղել պետական բյուջեի ծախսերի աճի նկատմամբ: Մասնավորապես, 2004 թվականի պետական բյուջեում սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերը նախորդ տարվա համեմատությամբ աճել են 23.8 տոկոսով, այն դեպքում, երբ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի աճը կազմել է 10.2 տոկոս: Կրթության ոլորտում ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 21 տոկոս, առողջապահության ոլորտում՝ 27.5, իսկ սոցիալական ապահովության և ապահովագրության ոլորտում՝ 24.5 տոկոս:

	2002	2003	2004
Պետ. բյուջեի ծախսերի աճը նախորդ տարվա նկատմամբ այդ թվում՝	7.9	18.5	10.2[3]
կրթություն	0.2	19.8	21.0
առողջապահություն	1.4	22.8	27.5
սոց. ապահով. և ապահովագրություն	-8.9	23.0	24.5
Սոցիալական ոլորտի ծախսեր, ընդամենը	-2.9	21.6	23.8

Հարկաբյուջետային քաղականության հատկանշական ձեռքբերումներից է նաև պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակի կրճատումը մինչև ՀՆԱ-ի 3 տոկոս մակարդակը:



Դեֆիցիտի մակարդակի իջեցմանը զուգահեռ շարունակվել է պետական պարտքի կառավարման բարելավումը: Արտաքին պարտքի կառավարման ոլորտում քաղաքականությունն ուղղված է եղել արտոնյալ պայմաններով վարկերի ստացմանը և ոչ արտոնյալ վարկերի վաղաժամկետ մարմանը:

[3] *Սոցիալական ծախսերին վերաբերող՝ 2004 թվականի ցուցանիշներում միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից իրականացվող ծրագրերի մասով ներառված են ծրագրային, այլ ոչ թե փաստացի ցուցանիշները: Վերջիններս հայտնի դառնալուց հետո դրանք համապատասխանաբար կճշգրտվեն:*

Վերջին տարիների հատկանշական ձեռքբերումներից է պետական պարտքի մակարդակի կրճատումը, որը 2004 թվականին արդեն կազմեց ՀՆԱ-ի 32.7 տոկոսը:



Միջազգային ֆինասնական համագործակցության շրջանակներում 2004 թվականին օրենքով արտաքին աղբյուրների վարկերի ստացումը կազմել է 45.7 մլրդ դրամ (77.5 մլն ԱՄՆ դոլար), որից շուրջ 52 մլն ԱՄՆ դոլար՝ Համաշխարհային բանկի, 12.2 մլն ԱՄՆ դոլար՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և 8.3 մլն ԱՄՆ դոլար Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի գծով:

2004 թվականին փաստացի ստացվել է շուրջ 45.6 մլրդ դրամ (87.8 մլն ԱՄՆ դոլար)՝ այդ թվում Համաշխարհային բանկի Աղքատության կրճատման աջակցության վարկը՝ շուրջ 10.3 մլրդ դրամ (21.2 մլն ԱՄՆ դոլար՝ համարժեք 13.7 մլն SDR-ի), որը նախատեսված չի եղել 2004 թվականի պետական բյուջեով: Պետական բյուջեով նախատեսվել և չեն ստացվել Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող վարկային ծրագիրը, իսկ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից նախատեսված վարկի գումարներից պակաս է ստացվել մոտ 8 մլն ԱՄՆ դոլար:

Հատկանշական է, որ 2004 թվականի մայիսի 20-ին 7 մլն եվրոյի (4649.05 մլն դրամ) չափով «Եվրոմիության կողմից տրամադրվող 28 մլն եվրո վարկ» վարկի վաղաժամկետ մարման արդյունքում Եվրոմիության կողմից 2004 թվականի հուլիսի 7-ին Հայաստանին է տրամադրվել «Բացառիկ օժանդակության դրամաշնորհ»՝ 5.5 մլն եվրոյի չափով (3621.09 մլն դրամ):

2004 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված է եղել շուրջ 14.2 մլրդ դրամ դրամաշնորհ, որից (առանց ծրագրերի իրականացման գրասենյակների (ՕԻԳ) տվյալների) նախնական տվյալներով ստացվել է 9.7 մլրդ դրամ:

2004 թվականին Եվրոմիության կողմից Պարենային ապահովության ծրագրի շրջանակներում 3 մասնաբաժիններով տրամադրվել է 9.5 մլն եվրո դրամաշնորհ (6119.4 մլն դրամ), որի երրորդ մասնաբաժինը ստացվել է 2004 թվականի դեկտեմբերի 12-ին՝ 4 մլն եվրոյի (2594.4 մլն դրամ) չափով:

2004 թվականին ծրագրավորված Հոլանդիայի կառավարության դրամաշնորհի մասով անհրաժեշտ իրավական ձևակերպումները տրվել են և այժմ սպասվում է դրամաշնորհի փաստացի ստացումը:

2004 թվականին օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների ու Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով Հայաստանի Հանրապետությանը ծրագրերով նախատեսվող ժամկետներում (2004 թվական և հետագա տարիներ) տրամադրվող գումարների չափը կկազմի մոտ 112.53[4] մլն ԱՄՆ դոլար և 40.4 մլն եվրո:

Մասնավորապես, վարկային համաձայնագրերով նախատեսվում է շուրջ 109 մլն ԱՄՆ դոլարի և 4.7 մլն եվրոյի վարկավորում, որի գերակշիռ մասը բաժին է ընկնում Համաշխարհային բանկի վարկային ծրագրերին՝ շուրջ 109 մլն ԱՄՆ դոլար: Իսկ դրամաշնորհային համաձայնագրերով նախատեսվում է շուրջ 3.5 մլն ԱՄՆ դոլար և 35.7 մլն եվրո, որից Եվրոհամայնքի մասը կազմում է՝ 35.7 մլն եվրո:

Վերջին տարիների ընթացքում, որոնց թվում բացառություն չէր նաեւ 2004 թվականը, Հայաստանի կառավարությունը բավականին արդյունավետ համագործակցում է միջազգային ֆինանսական կառույցների, մասնավորապես Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի հետ:

2001 թվականի մայիսի 23-ին Արժույթի միջազգային հիմնադրամի տնօրենների խորհուրդը հաստատեց Հայաստանին Աղքատության նվազեցման եւ տնտեսական աճին օժանդակության (PRGF) ծրագիրը: Ծրագրի հիմնական ուղղություններն էին հանդիսանում հարկային եւ մաքսային վարչարարության բարելավումը, բանկային համակարգի հետագա զարգացումը եւ ամրապնդումը, ինչպես նաեւ մի շարք այլ միջոցառումներ: Ծրագրի արդյունավետ իրականացման արդյունքում 2001-2004 թվականներին Հայաստանին տրամադրվեց 69 մլն SDR-ին համարժեք ԱՄՆ դոլար:

---

[4]SDR-ով նախատեսված վարկային գումարները վերահաշվարկված են 2005 թվականի փետրվարի 1-ի դրությամբ գործող հաշվարկային փոխարժեքով, մասնավորապես 1 SDR=1.25$:

2004 թվականի հունիսի 10-ին Համաշխարհային բանկի տնօրենների խորհրդի կողմից քննարկվեց եւ հաստատվեց «Երկրի օժանդակության ռազմավարություն»-ը, որով առաջիկա չորս տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն կունենա օգտվել մոտ 170-220 մլն ԱՄՆ դոլարի վարկավորումից՝ կապված Համաշխարհային բանկի ծրագրերը լավագույն սցենարով իրականացնող ճանաչվելու հանգամանքից: Կարեւոր է հաշվի առնել, որ ՀԲ-ի նախորդ «Երկրի օժանդակության ռազմավարության» իրականացման արդյունքում Հայաստանի արձանագրած տնտեսական ցուցանիշները, իրականացված հավասարակշռված մակրոտնտեսական քաղաքականությունը եւ անհրաժեշտ տնտեսական բարեփոխումների շարունակականությունը հնարավոր դարձրին Հայաստանը ճանաչել լավագույն սցենարի շրջանակներում վարկավորվող երկիր եւ մեծացնել Հայաստանի վարկավորման հնարավորությունները:

Միաժամանակ ՀԲ կողմից առաջիկա չորս տարիներին իրականացվելիք «Երկրի օժանդակության ռազմավարություն»-ում ընտրվել են Հայաստանի զարգացման երկարաժամկետ ռազմավարական նպատակները, որոնք բխում են ԱՀՌՇ-ից: Այդ նպատակներն են՝ մասնավոր հատվածի առաջատար դերակատարությամբ խթանել տնտեսական աճը, աճը դարձնել ավելի աղքատամետ եւ կրճատել ոչ եկամտային աղքատությունը:

Շարունակվել են պետական պարտատոմսերի (ՊՊ) շուկայի զարգացման դրական միտումները: 2004 թվականին պետական պարտատոմսերի եկամտաբերությունը դրսևորեց նվազման միտում՝ թողարկման ժամկետայնության զգալի աճի պայմաններում.

	Շրջանառության մեջ գտնվող ՊՊ *ժամկետ. (օր)*	Շրջանառության մեջ գտնվող ՊՊ Եկամտ.
2000	152	24.52%
2001	209	20.05%
2002	263	16.43%
2003	353	13.72%
2004	754	9.01%

Տեղաբաշխված պարտատոմսերի միջին ժամկետայնությունը 2004 թվականին կազմեց 863 օր, իսկ տարվա ընթացքում տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմեց 7.32 տոկոս:

2000-2004 թվականներին ներքին պարտքի բնութագրիչներն ունեին հետևյալ տեսքը.

	Թողարկում (մլրդ.դրամ)	Տեղաբաշխում (մլրդ.դրամ)	Դեֆ.ֆինանս. (մլրդ.դրամ)	Տեղաբաշխման եկամտաբ. (%)	Տեղաբաշխման ժամկետ. (օր)
1999թ.	64.85	57.56	0.95	52.64	147
2000թ.	47.23	44.85	1.78	24.82	219
2001թ.	45.20	45.91	5.95	20.94	287
2002թ.	41.94	41.88	3.95	15.72	382
2003թ.	44.20	43.30	2.30	13.44	544
2004թ.	43.9	43.9	5.58	7.32	863

2004 թվականի սեպտեմբերից հնարավոր եղավ թողարկել նաև միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր: 2004 թվականին հաջողվեց խորացնել նախորդ տարիներին ձևավորված երկարաժամկետ միտումները և թողարկել ու տեղաբաշխել 7, 10 տարի մարման ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր: 2004 թվականին կիրառված պարտքի կառավարման ռազմավարության տրամաբանական շարունակությունն է նաև 2005-2007 թվականներին ծրագրվող քաղաքականությունը, որը կրկին ուղղված է լինելու պարտքի ժամկետայնության երկարացմանն ու պարտքի էժանացմանը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2004 թ. սոցիալ-տնտեսական քաղաքականությանիրագործումը

Վերջին տարիներին կառավարության համար արդիական է դարձել գյուղական վայրերի հիմնախնդիրների լուծումը, որի ուղղությամբ իրականացված ամենօրյա հետևողական աշխատանքները տալիս են իրենց դրական արդյունքները:

2004 թվականին աշխատանքներ են իրականացվել տնտեսվարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի (կարտոֆիլ, հացահատիկ), հանքային պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների մատակարարման և մեքենայական աշխատանքների կազմակերպման աջակցության ուղղությամբ: Արդյունքում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2004 թվականին կազմել են 318.3 հազ. հա, նախորդ տարվա 314.6 հազ. հա դիմաց:

2004 թվականին նկատելիորեն ակտիվացել է խաղողի և պտղատու այգիների հիմնման գործընթացը: Դա պայմանավորված է խաղողի և պտղի իրացման հիմնախնդրի մեղմացմամբ և ոռոգման համակարգերի զարգացմամբ: Արդյունքում, հաշվետու տարում հիմնվել են 1500 հա խաղողի և շուրջ 1000 հա պտղատու այգիներ: Բարձր է եղել հացահատիկի համախառն բերքը, որի 146.2 հազ. տոննա հավելաճը 88.5 տոկոսով ապահովվել է բերքատվության բարձրացման, իսկ 11.5 տոկոսը՝ ցանքատարածության ավելացման հաշվին: Բանջարեղենի 31.3 հազ. տոննա բերքի հավելաճն ամբողջությամբ ապահովվել է բերքատվության ավելացման հաշվին: Ինչ վերաբերում է խաղողի արտադրության հավելաճին (67.3հազ. տոննա), ապա դրա շուրջ 73.0 տոկոսը նույնպես ապահովվել է բերքատվության բարձրացման հաշվին:

Զգալի աշխատանքներ են իրականացվել գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելման և տոհմային գործի բնագավառում:

Կառավարության և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ աշխատանքներ են իրականացվել գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման և բնական աղետների հետևանքների մեղմացման ուղղությամբ: Այդ ուղղությամբ կարևորվել է հակակարկտային ծառայության վերականգնումը, որի ուղղությամբ լուրջ աշխատանքներ են կատարվել, և այսօր Արագածոտնի մարզում տեղադրված են 15 հակակարկտային տեղակայանքներ, որոնց փորձարկումներն ընթացքի մեջ են և ակնկալվում է, որ իրենց դրական ազդեցությունը կունենան տարերային աղետների դեմ կիրառվող պայքարի գործում:

Բնական աղետների հետևանքների մեղմացման նպատակով կառավարությունը զգալի աջակցություն է ցուցաբերել տարբեր բնական աղետներից տուժած հողօգտագործողներին:

Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի նորացման և համալրման նպատակով շարունակվել են նոր տեխնիկայի ձեռքբերման աշխատանքները: Մասնավորապես, դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կնքվել են պայմանագրեր 2550 տոննա ազոտական պարարտանյութի, 39 միավոր տրակտորի, գյուղատնտեսական գործիքների ներմուծման վերաբերյալ: Միաժամանակ, բարեգործական ծրագրի շրջանակներում հանրապետություն են ներկրվել 51 միավոր տրակտոր և գյուղատնտեսական գործիքներ ու պահեստամասեր, որոնք աճուրդային կարգով իրացվել են գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարողներին:

Հանրապետության գրեթե 800 գյուղական համայնքներում 2004 թվականին իրականացվել են բազմաբնույթ խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ 834 խորհրդակցություններ, 153 դաշտային ցուցադրումներ և տպագրվել են ագրարային ոլորտին առնչվող 600-ից ավել տարաբնույթ նյութեր:

Պետական կառավարում

Վերջին տարիների տնտեսական և սոցիալական ոլորտներում ձեռքբերումները հաստատեցին, որ պետական կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականությունը տալիս է սպասված արդյունքը:

2004 թվականին ևս պետական կառավարման համակարգի բարեփոխումները գտնվել են կառավարության ուշադրության կենտրոնում: Ըստ հաջորդական փուլերի՝ իրականացվել և շարունակվում է նախարարությունների, գերատեսչությունների, ինչպես նաև տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների վերակառուցումը: Կարեւոր ձեռքբերում է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը մի կողմից երաշխավորում է համայնքային ծառայողների պաշտոնավարությունը՝ անկախ քաղաքական իշխանության փոփոխությունից, մյուս կողմից՝ սահմանում մասնագիտական գիտելիքների և փորձի պահանջներ՝ համապատասխան պաշտոն զբաղեցնելու համար:

Հստակեցվել են նախարարությունների կանոնադրությունները. բացահայտվել են կրկնվող, ավելորդ, տվյալ մարմնին ոչ բնորոշ գործառույթները, ինչպես նաև դրանք իրականացնող ստորաբաժանումները:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումները նպատակաուղղվել են պետական մարմինների՝ որպես քաղաքականություն մշակող և կանոնակարգող գործառույթների ուժեղացմանը, մասնավորապես, ձեւավորվել են բնապահպանության, աշխատանքի և կրթության տեսչությունները:

Առավել մեծ ուշադրություն է դարձվել պետական մարմինների կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության, դրանց գործունեության հրապարակայնության ապահովմանը: ՀՀ նախարարություններում 2004թ. ստեղծված հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումները լավ ինստիտուցիոնալ հիմք են քաղաքացիական հասարակության միավորումների, քաղաքացիների հետ աշխատանքը բարելավելու համար:

Նախարարություններում և մարզպետարաններում, ինչպես նաև պետական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվական կենտրոն-ընդունարանները հնարավորություն կտան իրագործելու տեղեկատվության ազատության մասին օրենքով սահմանված քաղաքացիների պահանջները:

Քայլեր են ձեռնարկվել պետական կառավարման համակարգի արդիականացման ուղղությամբ: ՀՀ կառավարությունը հաստատել է «Պետական հատվածի արդիականացման» ՀԲ-ի ծրագիրը, որը հնարավորություն կտա բարելավելու պետական կառավարման մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, որոշումների կատարման վերահսկողության համակարգը: 2004թ. ընդունված «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը կապահովի այս գործընթացների իրավական դաշտը:

Ֆինանսական կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ 2004թ. իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ՝ առանձնապես ներքին և արտաքին աուդիտի նոր համակարգերի ներդրման, միջին-ժամկետ ծախսերի պլանավորման հիման վրա ՀՀ պետական բյուջեի ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրումն ապահովելու համար:

Պետական կառավարման ոլորտում բարեփոխումները 2004թ. նպատակաուղղված էին նաեւ Կոռուպցիայի դեմ պայքարի և Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրերով նախատեսված նպատակների իրագործմանը: Այս համատեքստում հատկանշական էին կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի ձեւավորումը, որտեղ ընդգրկված են քաղաքացիական հասարակության, քաղաքական ուժերի և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ: Հայաստանը 2004թ. անդամակցում է Եվրամիության GRECO կազմակերպությանը, ինչպես նաև տնտեսական համագործակցության և զարգացման միջազգային կազմակերպության (OECD) հակակոռուպցիոն պայքարի ուղղությամբ ստեղծված անցումային երկրների ցանցին:

Տեղական ինքնակառավարում

Տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումները ուղղված են եղել տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների և պարտականությունների հստակեցմանը՝ ապահովելու համար անհրաժեշտ նախադրյալներ ինքնակառավարման կայացման ճանապարհին:

Վերանայվել և հստակեցվել են ֆինանսական համահարթեցման սկզբունքով պետական բյուջեից հատկացվող դոտացիաների, ինչպես նաև սուբվենցիաների և սուբսիդիաների հաշվարկման և տրամադրման մեխանիզմները:

2003 թվականից սկսած համայնքներին տրամադրվող դոտացիաների կատարողականը հասել է 100 տոկոսի:

2004 թվականին շարունակվել են աշխատանքները տեղական ինքնակառավարման համակարգերի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝ հատկապես ուշադրության և հատուկ հոգածության կենտրոնում է եղել սահմանամերձ ու բարձր լեռնային բնակավայրերի առաջնահերթ հիմնախնդիրների լուծումը:



Ջրային տնտեսություն

Ջրային տնտեսությունում իրականացված աշխատանքներն ուղղված են եղել հիմնականում ոռոգման և խմելու ջրի ջրառի և ջրամատակարարման կետում հաշվառման համակարգերի ներդրմանը, ջրամատակարարման տևողության մեծացմանն ու որակի բարելավմանը, համակարգում կորուստների նվազեցմանը:

2004 թվականի ընթացքում խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից սպառողներին մատուցվել է 122 մլն խ.մ. ջրամատակարարման և 88 մլն խ.մ. ջրահեռացման ծառայություններ, իսկ օրենքով ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների կողմից՝ 705.1 մլն խ.մ. ջրամատակարարման ծառայություններ: Էլեկտրաէներգիայի գծով ծախսն ամբողջ համակարգով (խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպություններ) կազմել է 463.2 մլն կվտ.ժամ, որը 2003 թվականի համեմատությամբ պակաս է շուրջ 170.0 մլն դրամով կամ 8.9 մլն կվտ/ժամով:

2004 թվականին «Արփա-Սևան» թունելով Սևանա լիճ է տեղափոխվել 260.9 մլն խ.մ. ջուր: 2004 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1897.65 մ., որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 41 սանտիմետրով:

Ընդհանուր առմամբ, նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը:

Ճանապարհային տնտեսություն

Արդկանց և համայնքների ֆիզիկական մեկուսացվածության գործոնի չեզոքացման խնդրի լուծման ուղղությամբ շարունակվել է ճանապարհային տնտեսության զարգացման աշխատանքների իրականացումը, որի որակը առանձին դեպքերում անդրադառնում է նաև ապրանքաշրջանառության (հատկապես գյուղական) արագ և էժան իրականացման խնդրի վրա:

Նշվածով պայմանավորված 2004 թվականին նույնպես կարևորվել է կապիտալ ներդրումները ճանապարհային տնտեսության մեջ: Մասնավորապես 2004 թվականին կազմակերպվել և իրականացվել են մոտ 7 մլրդ դրամի աշխատանքներ, որոնցից պետական բյուջեի միջոցների հաշվին շուրջ 4.5 մլրդ դրամ և 2.6 մլրդ դրամ ՀՀ կառավարության որոշմամբ լրացուցիչ հատկացված միջոցների հաշվին:

Ընդ որում, 2004 թվականին իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնց արդյունքում ձմեռային պահպանություն է իրականացվել պետական նշանակության 6150.6 կմ երկարությամբ ավտոճանապարհներին, իրականացվել է ընթացիկ նորոգում, հիմնանորոգվել են 5 կամուրջ, 9 ճանապարհահատված, նախագծային աշխատանքներ են իրականացվել համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար:

ՀՀ կառավարության որոշմամբ լրացուցիչ հատկացված միջոցների հաշվին հիմնանորոգվել է Պառավաքար-Ծաղկավան-Թովուզ-Բերդ ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհը և թվով 8 համայնքների ճանապարհաշինության համար տրվել են սուբվենցիաներ:

Համաշխարհային բանկի տրանսպորտի ծրագրի շրջանակներում 2004 թվականին կատարվել են 20.2 մլն ԱՄՆ դոլարի աշխատանքներ: Արդյունքում հնարավոր է եղել վերանորոգել 88.7 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական նշանակության ճանապարհներ, ինչպես նաև որպես փորձնական նախագիծ իրականացվել են որոշ տեղական ճանապարհների վերանորոգման աշխատանքներ:

Կրթություն

Կառավարության ուշադրության կենտրոնում է եղել կրթական համակարգի պահպանումն ու հետագա զարգացումը՝ որպես միջազգային ասպարեզում երկրի մրցունակությունն ապահովելու գրավական: Խնդրի իրագործումն ապահովվել է համակարգի աստիճանական բարեփոխման միջոցով:

Աշխատանքներ են տարվել կրթական համակարգի տարբեր մակարդակների կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական տեսակների հստակեցման, համակարգի կառավարման ձևի և ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ: Իրականացվել է ոլորտի կառավարման ապակենտրոնացում և ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի ներդրում:

Մշակվել և սկսել է իրականացվել դպրոցների օպտիմալացման ծրագիրը, որի արդյունքում զգալի բարձրացել է ոլորտին ուղղվող պետական ծախսերի արդյունավետությունը՝ ապահովելով դպրոցական կրթության որակի և մատչելիության բարելավում: Հատկապես վերջին երկու տարիների ընթացքում միջոցներ են հատկացվել դպրոցների շենքային պայմանների բարելավմանն ու ջեռուցման խնդիրների լուծմանը՝ նպատակ ունենալով հնարավորինս ապահովել կրթական գործընթացի անընդհատությունն ու հաճախելիության բարձրացումը: Մասնավորապես 2004 թվականին ավարտվել են շուրջ 200 դպրոցների հիմնանորոգման, վերանորոգման և նոր դպրոցների կառուցման աշխատանքներ: 2003 թվականից ավելացվել են ջեռուցման նպատակով տրվող վառելիքի չափը և ջեռուցման սեզոնի տևողությունը՝ տարբերակված ըստ հարթավայրային, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերում գտնվող դպրոցների:

Հանրակրթության ոլորտում որակյալ կադրերի հոսունության կրճատման, կրթության համապատասխան որակի ապահովման, ինչպես նաև ուսուցիչների սոցիալական վիճակի բարելավման նպատակով էականորեն բարձրացել է ուսուցիչների միջին աշխատավարձը: Եթե 2000 թվականին ուսուցիչների միջին աշխատավարձը կազմել է 12.6 հազ. դրամ, ապա 2003 թվականին այն կազմել է 18.6 հազ. դրամ, իսկ արդեն 2004 թվականին՝ 30.6 հազ. դրամ: Ուսուցիչների աշխատավարձի բարձրացման քաղաքականությունը շարունակվում է նաև 2005 թվականին՝ 2005 թվականի հունվարի 1-ից ուսուցիչների միջին աշխատավարձը արդեն իսկ կգերազանցի 50 հազ. դրամի սահմանագիծը: Էապես բարձրացվել է նաև պետական ուսումնական հաստատությունների վարչական աշխատողների աշխատավարձը:

Կրթության որակի բարձրացման և համապատասխանության ապահովման տեսանկյունից հատուկ ուշադրություն է դարձվում ուսուցիչների վերապատրաստմանն ու դպրոցների ուսումնամեթոդական և նյութատեխնիկական հիմքի բարելավմանը: Միայն 2004 թվականին վերապատրաստման դասընթացներում ընդգրկված են եղել մոտ 28000 ուսուցիչներ, որոնց 70 տոկոսը եղել են հանրապետության տարբեր մարզերից: Կրթության բովանդակության արդիականացման և գիտելիքների գնահատման համակարգի ներդրման նպատակով մշակվել են «Հանրակրթության պետական չափորոշիչները» և հիմնադրվել է գիտելիքների գնահատման կենտրոնը:

Հաջողվել է առաջին դասարանների աշակերտներին անվճար ապահովել դասագրքերով, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված գրքերով: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արդեն 2003 թվականից սկսած անվճար դասագրքերով ապահովվել են տարրական ընդհանուր կրթական ծրագրերով սովորող բոլոր երեխաները:

2004 թվականին կառավարության կողմից հիմնադրվել է Գնահատման և թեստավորման կենտրոնը և մշակվել է «Գիտելիքների գնահատման նոր հայեցակարգը»: Սովորողների գիտելիքների գնահատման նոր համակարգի ներդրման ռազմավարության և դպրոցի ավարտական ու բուհական ընդունելության առարկայական քննական թեստերի մշակման նպատակով ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնք մշակել են առաջին թեստային նմուշները:

2004 թվականին հանրակրթության ոլորտում իրականացվել են մեծ ծավալի շինվերանորոգման աշխատանքներ: Պետական բյուջեի միջոցներով կառուցվել է 25 նոր դպրոց և հիմնանորոգվել 187-ը: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի համաֆինանսավորվող ծրագրերով կառուցվել է 16 դպրոցական շենք և հիմնանորոգվել 148-ը:

2004 թվականին մշակվել են «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքի նախագիծը և «ՀՀ

նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», որի հիմնական նպատակներն են՝ Հայաստանում նախնական և միջին մասնագիտական կրթության արդյունավետ համակարգի ստեղծման միջոցով ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը՝ տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Բարձրագույն կրթության բնագավառում բարեփոխումները հիմնականում օրենսդրական կարգավորման ու կանոնակարգման բնույթ են կրել: Մասնավորապես կառավարությունը մշակել և Ազգային Ժողով է ներկայացրել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որն ընդունվեց 2004 թվականին և նպատակ ունի կանոնակարգել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության գործունեությունը:

Ըստ գնահատականների, 2004 թվականին պետական բյուջեի ծախսերը կրթության և գիտության բնագավառում կազմել են 47.6 մլրդ. դրամ: 2005 թվականի պետական բյուջեով նախատեսված կրթության ոլորտի ծախսերը 2004 թվականի համեմատությամբ ավելի են շուրջ 29.5 տոկոսով (14.0 մլրդ. դրամ), որը, ինչպես և 2004 թվականին էր, հիմնականում կուղղվի ուսուցիչների աշխատավարձերի բարձրացմանը:

Առողջապահություն

Առողջապահության համակարգի կենսագործունեության բարելավմանն ու զարգացմանը նպատակաուղղված իրականացվել են մի շարք գործողությունների ծրագրեր, որոնց հիմքում խնդիր է դրվել եղած միջոցների ու ներուժի պայմաններում առավելագույնս ապահովել քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը, բարձրացնել պետության կողմից երաշխավորված, բնակչության համար անվճար բժշկական օգնության իրական մատչելիությունը:

Բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության որակի ապահովման ու բարելավման հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ սկսել են կիրառվել սկզբունքային նոր մոտեցումներ:

2004 թվականին համակարգի շուրջ 80 տոկոս բուժհաստատություններում իրականացվել են վերանորոգման ու վերազինման աշխատանքներ: Հատկանշական է, որ բացվել են ժամանակակից բուժսարքավորումներով ու տեխնոլոգիաներով հագեցված բաժանմունքներ: 2004 թվականին առողջապահության

բյուջեով կենտրոնացված կարգով ձեռք են բերվել և բուժհաստատություններին են բաշխվել շուրջ 1 մլրդ. դրամի նորագույն բուժսարքավորումներ:

Բնակչության առողջության առաջնային պահպանման մակարդակի հզորացման նպատակով հանրապետությունում իրականացվում է ընտանեկան բժշկության համընթաց ներդրում և այստեղ ուղղվող ռեսուրսների տոկոսային հարաբերության աստիճանական մեծացում: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվել են: Մասնավորապես, շարունակվում են գործել երկու ընտանեկան բժշկության ամբիոնները, 81 ընտանեկան բժշկի գրասենյակները:

Մինչ այժմ կրթվել և վերապատրաստվել են 450-ից ավելի ընտանեկան բժիշկներ և բուժքույրեր: Հանրապետության 13 բուժհաստատություններում իրականացվել է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայությունների կառուցվածքի և գործառույթների բարելավում՝ փորձարկելով մշակված մեխանիզմները և նոր մեթոդները, հետագայում այն համակարգում ներդնելու համար:

Մոր և մանկան առողջության պահպանման, ծննդօգնության և վերարտադրողական առողջության բարելավման բնագավառում իրականացվում են շուրջ մեկ տասնյակ ծրագրային աշխատանքներ: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության 7 մլն. ԱՄՆ դոլար ֆինանսական աջակցությամբ սկսեց գործել գյուղական վայրերում վերարտադրողական առողջության և մանկական խնամքի բարելավմանն ուղղված հնգամյա ազգային (ՆՕՎԱ) ծրագիր:

2004 թվականին ամբողջական ծավալով սկսեց գործել «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիրը», որի նպատակն է բնակչությանը պաշտպանել տուբերկուլյոզով ընդհանուր հիվանդացությունից, միջոցառումներ իրականացնել առաջնակի հիվանդների թվի և տուբերկուլյոզից մահացության նվազեցման ուղղությամբ: Հանրապետությունում աստիճանաբար բարձր հիմքերի վրա են դրվում տուբերկուլյոզի բուժման համար անհրաժեշտ դեղորայքով ապահովման, բուժման, գործիքային հագեցվածության, մասնագետների վերապատրաստման գործընթացները: Տուբերկուլյոզով հիվանդների վաղ հայտնաբերման և ախտորոշման համար կարևոր քայլ հանդիսացավ Միջազգային կարմիր խաչի կողմից Աբովյանում ստեղծված ռեֆերենս–լաբորատորիայի անվարձահատույց նվիրատվությունը:

Առաջնային բուժօգնության համակարգի դերի և նշանակության բարձրացումն արտացոլվել է պետական բյուջեում: 2004 թվականի պետական բյուջեից այս բնագավառին հատկացվող միջոցները կազմել են ավելի քան 8.7 մլրդ. դրամ՝ 2.2 մլրդ. դրամով գերազանցելով 2003 թվականի մակարդակը: Ավելացել է ամբուլատոր-պոլիկլինիկական մեկ հաճախման գինը և դարձել է 900 դրամ, 2003 թվականի 450 դրամի դիմաց, իսկ մեկ հիվանդի մեկ օրվա բուժման ծախսը 2004 թվականին դարձել է 8300 դրամ, 2003 թվականի 7300 դրամի դիմաց: 2005 թվականին առողջապահության ոլորտում ֆի-

նանսավորումը ևս կշարունակի աճել և 2004 թվականի մակարդակը կգերազանցի ավելի քան 28 տոկոսով:

Առաջնային բուժօգնության համակարգի դերի բարձրացման համար կարևոր գնահատական է նախատեսված միջոցների ժամանակին և ամբողջությամբ հատկացումը: Կարևոր է այն փաստը, որ 2000 թվականի համեմատ առողջապահության ֆինանսավորման աստիճանը բարձրացել է ավելի քան 1.8 անգամ:

2004 թվականի ծնունդների թիվը կազմել է 37526՝ 4.8%-ով ավելի նախորդ տարվա համեմատ:

Առողջապահության ֆինանսավորման նպատակային քաղաքականության իրականացման արդյունքում բարձրացել է հիվանդների դիմելիությունը: Այսպես, սկսած 2002 թվականից հիվանդանոցներ ընդունված հիվանդների թիվն աճել է (100000 բնակչի հաշվով՝ 2001 թվականին՝ 4.9, 2002 թվականին՝ 6.1, 2003 թվականին՝ 6.8, 2004 թվականին՝ 6.9(նախնական), աճել է նաև ամբուլատոր-պոլիկլինիկաներ հաճախումների թիվը՝ (միջինը մեկ բնակչի հաշվով կազմել է՝ 2001 թվականին՝ 1.8, 2002 թվականին՝ 1.9, 2003 թվականին՝ 2.0, 2004 թվականին՝ 2.1 (նախնական):

Սոցիալական աջահովություն և աջահովագրություն

1999-2004 թվականներին նպաստներ ստանալու պայմանների աստիճանաբար խստացումը հանգեցրեց ընտանեկան նպաստներին ուղղվող ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության էական բարձրացման. 1999 թվականին՝ 21.1 մլրդ. դրամ և 230 հազ. ընտանիք, 2003 թվականին՝ 12.4 մլրդ. դրամ և 139 հազ. ընտանիք, 2004 թվականին՝ 16.09 մլրդ դրամ և 134 հազ. ընտանիք:

Աղքատության ընտանեկան նպաստի կատարելագործման աշխատանքներն իրականացվում են հատկացված ֆինանսական միջոցներն առավելապես անչափահասներին տրամադրելու ուղղությամբ: Այդ նպատակով արդեն 2003 թվականի հուլիսից նպաստի իրավունք ունեցող ընտանիքների անչափահաս անդամներին տրամադրվող հավելումը ավելացվել էր մինչ այդ (տարվա առաջին կիսամյակում) սահմանված չափից 500 դրամով և սահմանվել 2000 դրամ:

Ընտանեկան նպաստների ավելացումն ավելի ընդգծված է 2004 թվականին: Նախ, բազային նպաստի չափը 2003 թվականի 4000 դրամի փոխարեն սահմանվեց 4500 դրամ: Անչափահաս յուրաքանչյուր երեխայի համար նպաստի հավելավճարը սահմանվեց 2500 դրամ անապահովության ավելի ցածր աստիճանով ընտանիքների համար (35-38 բալ միջակայքում գտնվող ընտանիքների համար) և 3000 դրամ՝ ավելի անապահով ընտանիքների համար (38-ից բարձր բալեր ունեցող ընտանիքների համար): Ընտանիքներին տրվող նպաստի չափի տարբերակումը ըստ կարիքավորության աստիճանի նաև որակապես նոր մոտեցման կենսագործման սկիզբ է, և դրա խորացումը առաջիկա տարիներին ավելի կբարձրացնի պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

Այս փոփոխությունների արդյունքում 2004 թվականին միջին ընտանեկան նպաստի չափը կազմում է շուրջ 9000 դրամ՝ նախորդ տարվա 7000 դրամի փոխարեն, իսկ նպաստի չափի աճը նախորդ տարվա համեմատ կազմում է ավելի քան 28 տոկոս:

Շարունակվում են աղքատության ընտանեկան նպաստի կատարելագործման ուղղությամբ աշխատանքները և 2005 թվականին նախատեսվում է ընտանիքի անապահովության սահմանային մեծությունը նախորդ տարվա 35 միավորից դարձնել 34 միավոր, իսկ աղքատության ընտանեկան նպաստի բազային մասը 6000 դրամ, 2004 թվականի 4500 դրամի փոխարեն:

Զգալիորեն բարձրացել է նաև մինչև 18 տարեկան երեխաներին տրվող հավելումների չափը՝ կազմելով 3000-ից 4500 դրամ՝ տարբերակված անապահովության միավորից և բարձր լեռնային ու սահմանամերձ բնակավայրերում բնակվելու հանգամանքից: Աղքատության ընտանեկան համակարգում ընդգրկված ընտանիքներում երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ օգնության չափը սահմանվել է 35 000 դրամ:

Շարունակվել է կենսաթոշակների չափերը բարձրացնելու քաղաքականությունը և եթե 2000 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում միջին կենսաթոշակը կազմել էր 4.4 հազար դրամ, ապա 2003 թվականի հունվարի 1-ին այն կազմել է 6.4 հազար դրամ, կամ աճել է 50 տոկոսով: Կենսաթոշակների չափի բարձրացումը շարունակաբար աճել է նաև 2004 թվականին և ներկայումս միջին կենսաթոշակի չափը կազմում է մոտ 8200 դրամ (աճը նախորդ տարվա միջինի համեմատ՝ 28 տոկոս):

Մշակվել են օրենքներ և իրավական այլ ակտեր, որոնք ապահովելու են կենսաթոշակային համակարգի աստիճանական վերափոխումները և առաջիկա 3-5 տարիների ընթացքում նաև կուտակային կենսաթոշակային ապահովագրության իրականացումը, սոցիալական ապահովության քարտերի համակարգի կիրառումը: 2005 թվականի հունվարի 1-ի դրությամբ իրավասու մարմիններից ստացվել և մշակվել է ավելի քան 2 մլն. հայտ, որի արդյունքում շուրջ 1.6 մլն. քաղաքացիների հատկացվել է սոցիալական ապահովության քարտ:

2004 թվականի զբաղվածության պետական ծրագրերի իրականացման համար նախատեսված էր 725,5 մլն. դրամ, որից ծախսվել է 410,1 միլիոն դրամ: Կազմակերպվել է 512 գործազուրկի և 50 հաշմանդամի մասնագիտական ուսուցում:

Հունվարի 1-ի դրությամբ աշխատանքի է տեղավորվել 7893 մարդ, որից 44 տոկոսը՝ Երևանում:

Շարունակվել է ՄԱԿ-ի ՀՊԾ «Սնունդ ուսուցման դիմաց» ծրագրի շրջանակներում կազմակերպված գործարարության հիմունքների ուսուցումը՝ շուրջ 10.000 աշխատանք փնտրող չզբաղված անձանց համար: Օպտիմալացման հետևանքով կրճատված շուրջ 6000 ուսուցչից զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառվել է 1734-ը, որոնցից 327-ին տրվել է 30.4 միլիոն դրամի չափով լրացուցիչ դրամական օգնություն:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2004 թ. սոցիալ-տնտեսական քաղաքականության իրագործումը

Բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքներն ուղղված են եղել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի հետագա կատարելագործմանը և առաջնահերթ հիմնախնդիրների լուծմանը :

2004 թվականին բնապահպանության ոլորտի գծով հիմնական ձեռքբերումներ են եղել՝

- «Թափոնների մասին» և «Բնապահպանական վերահսկողության մասին» (առաջին ընթերցմամբ) Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումը:

- Սևանա լճի մակարդակի բարձրացման կայուն միտումները (շարունակական բնույթը) (2002 թ.՝ 44սմ, 2003 թ.՝ 48 սմ, 2004 թ.՝ 41 սմ) :

- Բնօգտագործման հաշվառվող ծավալների ավելացման և բնապահպանական տեսչական աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերի աճը (2003 թ. համեմատ աճել են ավելի քան 40 տոկոսով կամ 471.4 մլն. դրամով):



-ՀՀ նոր ջրային օրենսգրքի համաձայն ձևակերպված ջրօգտագործման թույլտվություններով իրավական դաշտ է բերվել հանրապետության ջրօգտագործման ծավալի շուրջ 90%-ը:

-Ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք փաստաթղթերի ընդունումը՝

-Հայաստանի Հանրապետության անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը,

-Ապօրինի անտառհատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիրը,

-«Ավտոտրանսպորտից վնասակար արտանետումների նվազեցման հայեցակարգը,

-Հայաստանի Հանրապետությունում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2005-2010 թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկը:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2004 թ. սոցիալ-տնտեսական քաղաքականության իրագործումը

2004 թվականին ամփոփվեցին նախորդ տարվա ընթացքում տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները, որոնք արձանագրում են աղքատության կրճատման հարցում էական առաջընթաց: Աղքատությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հետազոտությունների, որոնք իրականացվել են 1996, 1998/1999, 2001, 2002 և 2003 թվականներին, ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղքատությունը բնութագրող հիմնական ցուցանիշները 1996, 1998/99, 2001, 2002 եւ 2003 թթ.

Հիմնական ցուցանիշները	1996	1998/1999	2001	2002	2003
Աղքատ բնակչության թիվ, տոկոս	54.73	55.05	50.9	49.7	42.9
Ծայրահեղ աղքատ բնակչության թիվ, տոկոս	27.67	22.91	16.0	13.1	7.4
Ձինիի գործակից ըստ մեկ շնչին ընկնող ընդհանուր եկամտի	0.653	0.570	0.528	0.449	0.434
Ձինիի գործակից ըստ մեկ շնչին ընկնող ծախսի	0.444	0.372	0.344	0.325	0.271

2002 թվականին առաջին անգամ ոչ աղքատ բնակչության թիվը գերազանցեց աղքատ բնակչության թիվը: 2003 թվականին ևս շարունակվեց աղքատության մակարդակի կրճատման միտումը՝ հասնելով 42.9 տոկոսի:

2003 թվականին՝ 1999 թվականի համեմատությամբ շուրջ 12.15 տոկոսային կետով աղքատության մակարդակի նվազումը ,աղքատության հաղթահարման տեսանկյունից զգալի տեղաշարժ է: Ընդ որում, 2000-2003 թվականներին էականորեն նվազել է ծայրահեղ աղքատ բնակչության թիվը՝ 22.9 տոկոսից նվազելով մինչև 7.4 տոկոս, ինչն ուղղակիորեն կապված է պետության կողմից իրագործված սոցիալական քաղաքականության հասցեականության բարձրացման փաստի հետ:

Վերջին տարիների ընթացքում աղքատության հաղթահարման տեսանկյունից արձանագրված դրական միտումները պայմանավորված են եղել ինչպես արձանագրված բավականին բարձր տնտեսական աճով, այնպես էլ եկամուտների բաշխման անհավասարության մեղմացմամբ: Եկամուտների բաշխման անհավասարությունը բնութագրող Ջինիի գործակիցը 1999-2003 թվականների ընթացքում 0.57-ից նվազել է մինչև 0.434, ինչը վկայում է ստեղծված արդյունքի բաշխման հավասարության աստիճանի էական բարելավման մասին:

Տարվա ընթացքում կառավարությունը սկսել է ԱՀՌՇ կատարումն ապահովող 2004-2006 թվականների միջոցառումների ցանկին համապատասխան միջոցառումների իրականացումը: ԱՀՌՇ իրականացման մասնակցային գործընթացի զարգացման նպատակով բանակցային խմբում ընդգրկված կողմերի հետ 2004 թվականի հուլիսին ստորագրվեց գործընկերային բանակցություններ ծավալելու մասին հուշագիր: 2004 թվականի հոկտեմբերին կնքվեց ԱՀՌՇ իրականացման գործընկերային համաձայնագիր, որը սահմանեց ծրագրի իրականացման միջինժամկետ գերակա քաղաքականությունները և ԱՀՌՇ կառավարման ձևը: ԱՀՌՇ համակարգող մասնակցային խորհրդի ձևավորման համար մշակվել և հաստատման է ներկայացվել համապատասխան որոշման նախագիծը: ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 1780-Ն որոշմամբ հաստատվել է ԱՀՌՇ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգը, որը հնարավորություն կընձեռի գնահատել ԱՀՌՇ իրականացման ընթացքը:

ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2004 թ. սոցիալ-տնտեսական քաղաքականության իրագործումը

2004 թվականի ընթացքում սկսվեցին «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի հայաստանյան ծրագրի մշակման գործընթացի համակարգման աշխատանքները: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ստացվել և ամփոփվել են շահագրգիռ կողմերի 200-ից ավելի առաջարկություններ, որոնք հիմք են դարձել ներկայումս ընթացքի մեջ գտնվող՝ «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի հայաստանյան ծրագրի մշակման համար: Նշված քննարկումների ընթացքում ձևավորվել են ծրագրային գերակայությունների վերաբերյալ հստակ մոտեցումներ: Նախատեսվում է, որ ծրագրային գերակայությունների առանցքը կլինեն գյուղական ենթակառուցվածքները, հատկապես ոռոգման համակարգը և համայնքային նշանակության ճանապարհները:

Բովանդակություն

2004 թ. սոցիալ-տնտեսական քաղաքականության իրագործումը

Ներածություն.....3

Տնտեսական ոլորտ.....5

Ներդրումներ.....9

Մասնավորեցում
եւ պետական գույքի կառավարում.....10

Տոկոսադրույքներ.....11

Արտահանում.....12

Փոքր եւ միջին ձեռնարկատիրություն.....13

Զբոսաշրջություն.....15

Տեղեկատվական տեխնոլոգիաներ 16

Ստանդարտացում, չափագիտություն եւ
համապատասխանության հավաստում.....16

Գյուղատնտեսություն, շինարարություն,
ծառայությունների ոլորտ.....17

Բյուջետային համակարգ.....18

Գյուղացիական տնտեսություն.....25

Կառավարման ոլորտ.....27
Պետական կառավարում.....27
Տեղական ինքնակառավարում.....29
Ենթակառուցվածքներ.....30
Գրային տնտեսություն.....30
Ճանապարհային տնտեսություն.....31
Սոցիալական ոլորտ.....32
Կրթություն.....32
Առողջապահություն.....34
Սոցիալական ապահովություն
եւ ապահովագրություն.....37
Բնապահպանության ոլորտ.....39
Աղքատության հաղթահարում.....41
ԱՄՆ կառավարության
«Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամ.....43

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 2004 ԹՎԱԿԱՆԻՑ

ՀՀ կառավարության տեղեկատվության
եւ հասարակայնության հետ կապերի վարչություն

Տնտեսական բարեփոխումների
վերլուծական-տեղեկատվական կենտրոն

Հրատարակվում է
Միավորված ազգերի կազմակերպության
Զարգացման ծրագրի աջակցությամբ:

Ձեւավորումը
եւ համակարգչային էջադրումը՝
Ա.Բաղդասարյանի:

Ծավալ՝ 3 պայմ. տպ. մամուլ: Չափս՝ 60X84 1/16:
Թուղթ՝ կավճապատ, 115 գր/մ^2:
Տպաքանակ՝ 1000

Տպագրված է «Փրինթինֆո» ՀՁ ՍՊԸ տպարանում: